Protection of Rights
Without Borders NGO

**«Իրավունքների պաշտպանություն
առանց
սահմանների» ՀԿ**

2019
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Մշտադիտարկումներ

- ***Վարչական գործերով դատավարությունների մշտադիտարկում ՀՀ վարչական դատարանում՝*** հանրային կառավարման և վարչական արդարադատության խնդիրների ուսումնասիրության նպատակով: Մշտադիտարկման արդյունքները, արձանագրված խնդիրներն և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները ներկայացնող զեկույցը գտնվում է վերջնականացման փուլում:

- ***Բարձրագույն դատական խորհրդի գործունեության մշտադիտարկում*** (դեռևս 2018 թվականից)

✓ Մշտադիտարկման արդյունքները ամփոփվել են «ՀՀ-ում դատական իշխանության ինքնակառավարման մարմինների գործունեությունը՝ որպես դատական իշխանության անկախության երաշխիք» զեկույցում:

✓ Բարձրագույն դատական խորհրդի գործունեության և ձևավորման պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում վեր հանված խնդիրները և դրանց ուղղված առաջարկությունները քննարկելու նպատակով 2019թ. հուլիսի 25-ին կազմակերպվել է «Բարձրագույն դատական խորհրդի գործունեության հեռանկարները ՀՀ-ում» խորագրով քննարկում, որին մասնակցել են ներկայացուցիչներ իշխանության բոլոր ճյուղերից, ոլորտի մասնագետներ և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

- ***Դատավորների թեկնածուների քաղաքացիական, քրեական և վարչական մասնագիտացման բաժինների հերթական և արտահերթ համալրման նպատակով անցկացված որակավորման գրավոր քննությունների և հարցազրույցի փուլերի դիտորդություն:*** Դիտորդության արդյունքները ամփոփվել են 2019 թվականի հունիսի 28-ին հրապարակված՝ «Դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական, քրեական և վարչական մասնագիտացման բաժինների արտահերթ համալրման նպատակով անցկացված որակավորման քննությունների դիտարկման վերաբերյալ» զեկույցում:

Իրավաբանական խորհրդատվություն և ներկայացուցչություն

2019թ. ընթացքում իրավաբանական օգնություն է տրամադրվել քաղաքացիներին վարչական, քաղաքացիական և քրեական ոլորտներում, այդ թվում իրավախորհրդատվություն, ներկայացուցչություն և պաշտպանություն: Բանավոր և գրավոր իրավաբանական խորհրդատվություն է տրամադրվել ավելի քան 100 անձի, այդ թվում՝ կազմվել են իրավաբանական բնույթի փաստաթղթեր:

Իրավախորհրդատվության ընթացքում առավել հաճախ հանդիպող հարցեր

➢ Ինքնակամ շինությունների օրինականացման, կառուցապատման իրավունքի տրամադրման վերաբերյալ, հողամասը ձեռքբերման վաղեմության իրավունքով տրամադրելու վերաբերյալ հարցեր,

➢ Փաստաթուղթը չպահպանված կամ այլևս գոյություն չունեցող պետական մարմինների կողմից տրված փաստաթղթերի հիման վրա անձանց սեփականության իրավունքը հաստատելու վերաբերյալ հարցեր,

- Ժառանգության ընդունման դատական և արտադատական կարգի, կտակի կազմման և բացման, կտակի անվավերության վերաբերյալ հարցեր,
- Հարկային պարտավորությունների կատարման, հարկային պարտավորությունները խախտելու դեպքում նախատեսվող պատասխանատվության վերաբերյալ հարցեր,
- Հարկադիր կատարումն ապահովող մարմինների կողմից անձանց անշարժ գույքից վտարելու, գույքի վրա արգելանք դնելու, գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հարցեր,
- Սնանկության վարույթի վերաբերյալ հարցեր,
- Կենսաթոշակի իրավունքի տրամադրման վերաբերյալ հարցեր,
- Հաշմանդամության կարգերի սահմանման, հաշմանդամության նպաստի տրամադրման վերաբերյալ հարցեր,
- Աշխատողների իրավունքների՝ աշխատանքային պայմանագրի կազմման, արձակուրդի տրամադրման, աշխատանքից ազատման հիմքերի, կարգապահական պատասխանատվության հիմքերի, աշխատանքից անհիմն ազատվելիս աշխատողների իրավունքների և օրենսդրությամբ սահմանված երաշխիքների վերաբերյալ հարցեր:
- Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետ կապված հարցեր,
- Երեխայի իրավունքների վերաբերյալ հարցեր,
- Անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի պաշտպանության հետ կապված հարցեր,
- Արտոնագրային իրավունքի տրամադրման, պետական մարմնի կողմից արտոնագրային իրավունք չտրամադրելիս անձի իրավունքների վերաբերյալ հարցեր,
- Զինվորական ծառայության անցնելու, սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայության չանցնելու վերաբերյալ հարցեր,
- Բանկային սպասարկման ոլորտում խտրականության դրսևորումների վերաբերյալ հարցեր,
- Քաղաքացիություն ստանալու, քաղաքացիությունից հրաժարվելու վերաբերյալ հարցեր,
- Օտարերկրացիների կողմից ՀՀ-ում առանց վավերական արտոնագրի կամ կացության կարգավիճակի բնակվելու, կացության կարգավիճակ ստանալու վերաբերյալ հարցեր,
- Օտարերկրացի ներդրողների կողմից ՀՀ-ում գործունեություն ծավալելիս առաջացող խնդիրներ,
- Իրավապահ մարմինների կողմից անձանց ապօրինի ազատությունից զրկելու, վարչական մարմինների կողմից ոչ իրավաչափ վարչարարությամբ անձանց պատճառված վնասի արդյունքում քաղաքացիներին պատճառված բարոյական վնասների հատուցման վերաբերյալ հարցեր:

Խաղաղ հավաքների ընթացքում հավաքի մասնակիցների իրավունքների զանգվածային խախտումներ.

Կազմակերպությունը ստանձնել է 2015թ. հունիսի 23-ին (Էլեկտրիկ Երևան), 2016թ. հուլիսի 17-30 («Հուլիսյան դեպքեր»), 2018թ. ապրիլի 16-23-ը («Թավշյա հեղափոխություն») Հայաստանում տեղի ունեցած խաղաղ հավաքների ընթացքում մարդու իրավունքների խախտումների հետևանքով տուժած քաղաքացիների շահերի պաշտպանությունը:

- ***Էլեկտրիկ Երևան.*** 2015թ. հունիսի 23-ին Երևան քաղաքում տեղի ունեցած խաղաղ նստացույցի ընթացքում ոստիկանության գործողությունների առնչությամբ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցված թիվ 62217915 քրեական գործը 2019թ. մարտին կասեցվել էր:

Վերադասության կարգով բողոքարկման արդյունքում 2019թ. ապրիլի 15-ին ՀՀ գլխավոր դատախազության դատախազի որոշմամբ կասեցման որոշումը վերացվել էր: 2019թ. հուլիսի 26-ին քրեական գործով վարույթը երկրորդ անգամ է կասեցվել: Որոշումը բողոքարկվել է վերադասության և դատական կարգով. ներկայումս բողոքը գտնվում է դատական քննության փուլում:

➢ ***Հուլիսյան դեպքեր.*** 2016թ. հուլիսի 29-ին «Սարի թաղ» թաղամասում տեղի ունեցած խաղաղ հավաքը ցրելու նպատակով ոստիկանության աշխատակիցների գործողությունների առնչությամբ Հատուկ քննչական ծառայությունում հարուցված թիվ 61205016 քրեական գործը 2018թ. և 2019թ. ևս 2 անգամ կասեցվել է: Հատուկ քննչական ծառայության կողմից կայացված որոշումը բողոքարկել են վերադասության և դատական կարգով: 2019թ. օգոստոսի 30-ին ստացված գրությամբ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը տեղեկացրել է, որ 2019թ. օգոստոսի 6-ին թիվ 61205016 քրեական գործով վարույթը վերսկսվել է:

➢ ***2018թ. ապրիլի 16-ից 23-ը*** Հայաստանում ընթացող ժողովրդական խաղաղ հավաքների ընթացքում ոստիկանության գործողությունների առնչությամբ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցված թիվ 61205016 քրեական գործի վարույթը կասեցվել էր 2018թ. նոյեմբերի 16-ին: ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի որոշման հիման վրա 2019թ. հուլիսի 10-ին վերսկսվել էր: Այդուամենայնիվ, 2019թ. օգոստոսի 9-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչի նույնաբովանդակ որոշմամբ քրեական գործով վարույթը կասեցվել է երկրորդ անգամ: Վերադասության կարգով բողոքարկումից հետո որոշումը բողոքարկվել է նաև դատական կարգով, ներկայումս գտնվում է դատական քննության փուլում:

Հատկանշական է, որ երեք քրեական գործերի շրջանակներում էլ ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ քրեական գործերի վարույթը կասեցվել է «որպես մեղադրյալ անձը հայտնի չլինելու» պատճառաբանությամբ:

Այս իրադարձությունների ընթացքում մարդու իրավունքների մարդու իրավունքների զանգվածային, համակարգային խախտումների և դրանց արդյունքում տուժած անձանց արդյունավետ պաշտպանության հնարավորությունների շուրջ խորհրդարանական լսումներ կազմակերպելու առաջարկող դիմում է ներկայացվել ՀՀ Ազգային ժողովի նախագահին, խորհրդարանական խմբակցություններին, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովին, Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին, ՀՀ Կառավարությանը, Մարդու իրավունքների պաշտպանին: Հանրային լսումներ հրավիրելու իրավասություն ունեցող մարմինները պատշաճ արձագանք չեն տվել:

Տեղեկատվության ազատության իրավունք

➢ Դատարան է ներկայացվել 3 հայցադիմում ընդդեմ տարբեր պետական մարմինների՝ քաղաքացիների, ինչպես նաև Կազմակերպության՝ որպես հանրային վերահսկողի գործառույթ իրականացնողի տեղեկատվության ազատության իրավունքը վերականգնելու պահանջով:

✓ Դատարանի կողմից մասնակիորեն բավարարվել է ՀՀ արդարադատության նախարարության դեմ ներկայացված հայցը, որով պահանջվել էր պարտավորեցնել ներման խնդրագրով դիմած անձանց վերաբերյալ տվյալներ տրամադրել՝ պատճառաբանելով, որ պահանջվող տվյալները համարվում են անձնական բնույթի գաղտնիք և ԱՆ-ին պարտավորեցվել է տրամադրել միայն քանակական տվյալներ: Վճիռը բողոքարկվել է վերաքննության կարգով:

✓ Դատարանի կողմից մերժվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության դեմ ներկայացված հայցը՝ տրամադրելու ԱԻՆ աշխատակիցների կողմից կազմակերպության դուռը կոտրելու և գրասենյակ մուտք գործելու գործընթացի տեսաձայնագրությունը՝ պատճառաբանելով, այն պատճառաբանությամբ, որ հարցվող տեղեկությունը տրամադրելը հնարավոր չէ՝ տեսաձայնագրության բացակայության հիմքով: Վճիռը բողոքարկվել է վերաքննության կարգով:

Մասնագիտական գործունեության սահմանափակման առնչությամբ դատական գործեր

➢ 2013թ. դեկտեմբերի 2-ին Երևան քաղաքում լրագրող Թեհմինե Ենոքյանին մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից բերման ենթարկվելու առնչությամբ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումը 2019թ. նոյեմբերի 4-ի վճռով բավարարվել է՝ ճանաչելով լրագրողի անձնական ազատության իրավունքի սահմանափակման և լրագրողական գործունեության ժամանակավոր սահմանափակման փաստը:

➢ ՀՀ ԱՆ Նուբարաշեն և Երևան-Կենտրոն քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների կողմից 2017 թվականի ապրիլի 2-ին Հասարակական դիտորդական խմբի անդամ Հասմիկ Հարությունյանին քրեակատարողական հիմնարկներ մուտք գործելն արգելելու առնչությամբ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումները 2019թ. սեպտեմբերի 19-ի վճիռներով բավարարվել են՝ ճանաչելով Հասմիկ Հարությունյանի մասնագիտական գործունեության ոչ իրավաչափ սահմանափակման փաստը:

- ***Ոչ նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ գործեր***

➢ 2018 թվականի դեկտեմբեր և 2019 թվականի հունվար ամիսներին 2018թ. ապրիլին տեղի ունեցած ընթացքում զանգվածային անկարգություններ կազմակերպելու, դրանց մասնակցելու կասկածանքով ձերբակալված քաղաքացիների անունից ընդդեմ Հայաստանի հանրապետության՝ ի դեմս Ֆինանսների նախարարության, երեք հայցադիմում է ներկայացվել դատարան՝ ոչ իրավաչափ ձերբակալմանհետևանքով կրած ոչ նյութական վնասի փոխատուցման պահանջի մասին: 2019 թվականի դեկտեմբերի դրությամբ գործերը գտնվում են քննության փուլում:

➢ Դեռևս 2018 թվականի հոկտեմբերի 2-ին ՀՀ վարչական դատարանը հաստատել էր, որ ոստիկանության աշխատակիցների կողմից 2016 թվականի հունվարի 21-ին ՀՀ նախագահի նստավայրի մոտ խախտվել էր Հայկուհի Հարությունյանի ազատ տեղաշարժի իրավունքը: Ոստիկանության աշխատակիցների ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում Հայկուհի Հարությունյանին պատճառված բարոյական վնասը փոխհատուցելուն պարտավորեցնելու պահանջի մասին ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցը գտնվում է դատական քննության փուլում:

- ***Պատվի և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման և հերքելուն պարտավորեցնելու պահանջի մասին գործեր***

➢ Կազմակերպության իրավաբանները ներգրավված են զրպարտության և վիրավորանքի հիմքով պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջներով դատական գործերում՝ ներկայացնելով ինչպես հայցվորների, այնպես էլ պատասխանողների շահերը:

- ***ՄԻԵԴ գործեր***

Կազմակերպությունը 2019թ. մարդու իրավունքների խախտումների առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարան է ներկայացրել 3 գանգատ:

➢ 2019թ. հոկտեմբերի 3-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճիռ է կայացրել Հայաստանի դեմ Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արձանագրել է, որ Դիմումատուին անգործունակ ճանաչելը խախտել է նրա արդար դատաքննության (դատարանի հասանելիության) իրավունքը և անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը:

Մասնակցություն և ներգրավվածություն

Կազմակերպության աշխատակիցները 2019թ. ընթացքում մասնակցել են տեղական և միջազգային կառույցների կողմից կազմակերպված մարդու իրավունքների տարբեր միջոցառումների: Հատկանշական են հատկապես հետևյալ միջոցառումները՝

- 2019թ. ապրիլի 5-ին Կազմակերպության իրավաբանը ելույթ է ունեցել ՀՀ Ազգային ժողովում կայացած «Մարդու իրավունքների ազգային օրակարգ. ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկումներ» թեմայով հանդիպմանը:

- 2019թ. մայիսի 13-ին Կազմակերպության նախագահը մասնակցել է «Անվտանգության ոլորտի կառավարումն ու վերահսկողությունը խորհրդարանի դերը» թեմայով սեմինարին:

- 2019 թվականի մայիսի 9-ին Կազմակերպության նախագահը Պրահայում մասնակցել է «Հայաստանի թավշյա հեղափոխությունը մեկ տարի անց» թեմայով միջոցառմանը՝ որպես բանախոս:

- 2019թ. մայիսի 24-ին Կազմակերպության նախագահը մասնակցել է ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցող խորհրդարանական լսումներին՝ «Անցումային արդարադատություն» թեմայով:

- 2019թ. հունիսի 5-ին Կազմակերպության նախագահը որպես բանախոս մասնակցել է «Արդար դատաքննության իրավունքի հիմնախնդիրները» թեմայով քննարկմանը:

- 2019թ. հունիսի 12-14-ը Կազմակերպության նախագահը մասնակցել է Թբիլիսիում ընթացող «Օրենքի գերակայության խթանումը հետխորհրդային երկրներում պետական և ոչ պետական կառույցների համագործակցության միջոցով» խորագրով եռօրյա սիմպոզիումին:

- 2019թ. հունիսի 25-ին կազմակերպության նախագահը որպես բանախոս մասնակցել է «Դատաիրավական համակարգի բարեփոխումները Հայաստանում» խորագրով քննարկմանը:

- 2019թ. հուլիսի 10-ին Կազմակերպության նախագահը մասնակցել է «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի» Կառավարության որոշման նախագծի հանրային քննարկմանը:

- 2019թ. սեպտեմբերի 4-ից 6-ը Կազմակերպության նախագահը մասնակցել և ելույթով հանդես է եկել Պեկին 25 տարածաշրջանային խորհրդակցությանը նվիրված Պեկինի հռչակագրի 25-ամյակին:

- 2019թ. սեպտեմբերի 22-ից 24-ը կազմակերպության իրավական հարցերով փորձագետը մասնակցել է և ելույթով է հանդես եկել Վարշավայում ընթացող ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) Մարդկային չափման հարցերով համաժողովին (HDIM):

- 2019թ. սեպտեմբերի 24-ից 26-ը Կազմակերպության նախագահը մասնակցել է Զարգացման քաղաքականության ֆորումի Ասիական երրորդ տարածաշրջանային հանդիպմանը:

- 2019թ. հոկտեմբերի 10-ին Կազմակերպության իրավական հարցերով փորձագետը որպես բանախոս մասնակցել է «Հոգեկան առողջության հիմնախնդիրները» թեմայով քննարկմանը:

- 2019թ. հոկտեմբերի 13-ից 15-ը Կազմակերպության նախագահը Պրահայում մասնակցել է «Վերականգնելով 1989 թվականի խոստումը» խորագրով 23-րդ ամենամյա վեհաժողովին:

- 2019թ. հոկտեմբերի 22-ին Կազմակերպության նախագահը որպես բանախոս մասնակցել է «Հետհեղափոխական Հայաստան. ոստիկանության բարեփոխումների տեսլականը և օրակարգը» թեմայով քննարկմանը:

- 2019թ. նոյեմբերի 5-ին Կազմակերպության իրավաբանը մասնակցել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի նախագծի ամփոփիչ հանրային քննարկմանը:

- 2019 թվականի նոյեմբերի 27-ին Կազմակերպության իրավաբանը մասնակցել է «ՀԿ-ների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում» ԵԽ Միջազգային կազմակերպությունների համաժողովին:

- 2019թ. դեկտեմբերի 9-ին Կազմակերպության իրավական հարցերով փորձագետը որպես բանախոս մասնակցել է «Կոռուպցիայի դեմ պայքարը՝ հանուն կայուն զարգացման նպատակների» խորագրով քննարկմանը:

- 2019 թվականի դեկտեմբերի 10-ին Կազմակերպության նախագահը որպես բանախոս մասնակցել է «Զինված ուժերում մարդու իրավունքների խնդիրների վերաբերյալ քննարկմանը:

Ներգրավվածություն հասարակական խորհուրդների, դիտորդական խմբերի կազմում.

- 2019թ. մայիսի 8-ին ՀՀ արդարադատության նախարարի N159 Ա հրամանով կազմակերպության իրավական հարցերով փորձագետ Հասմիկ Հարությունյանը և իրավաբան Նինա Հակոբյանը ընդգրկվել են ՀՀ արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

- 2019 թվականի սեպտեմբերի 12-ին կազմակերպության իրավական հարցերով փորձագետ Հասմիկ Հարությունյանը վերընտրվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ
- 2019 թվականի հոկտեմբերի 2-ին Կազմակերպության իրավական հարցերով փորձագետ Հասմիկ Հարությունյանը և իրավաբան Նինա Հակոբյանը ընդգրկվել են ՀՀ կառավարության Հանրային կառավարման բարեփոխումների հանրային հարթակում:
- 2019թ. դեկտեմբերի 27-ին ՀՀ Արդարադատության նախարարության ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրերի համակարգող խորհրդի՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչ է ընտրվել կազմակերպության իրավական հարցերով փորձագետ Հասմիկ Հարությունյանը:

Հրապարակումներ

Կազմակերպության կողմից պատրաստվել և հրապարակվել են կարծիքներ.

- ՀՀ Կառավարության 2019 թվականի ծրագրի նախագծի վերաբերյալ
- «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման» նախագծի վերաբերյալ:
- «Հիվանդանոցային և արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունների անցկացման կարգը սահմանելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ:
- «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ:
- «Հասարակական կազմակերպությունների» մասին ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ:

Կազմակերպության կողմից իրականացվել են վերլուծություններ.

- Ցմահ ազատազրկման դատապարտված անձանց իրավական կարգավիճակի երաշխիքների վերաբերյալ,
- ՀՀ-ում քրեական գործերով վարույթն իրականացնող մարմնի կողմից կալանավորված անձի տեսակցությունների և արտաքին աշխարհի հետ կապի արգելքի իրավաչափության հարցի վերաբերյալ՝ եվրոպական դատարանի որոշումների և ՀՀ ներպետական օրենսդրության և պրակտիկայի տեսանկյունից,
- Ներկայացվել են նաև Կազմակերպության դիտարկումները Մայրապետյանն ընդդեմ Հայաստանի գործի առնչությամբ կիրառված ընթացակարգերի վերաբերյալ:

Ուսումնասիրություններ

- Կազմակերպության կողմից իրականացված «ՀՀ-ում դատական իշխանության անկախության ապահովումը Սահմանադրական փոփոխություններին համահունչ» ծրագրի շրջանակներում ՀՀ բարձրագույն դատական խորհրդի գործունեության մշտադիտարկման արդյունքում հրապարակվել է ուսումնասիրություն Բարձրագույն դատական խորհրդի որոշումների վերաբերյալ,

- ՀՀ արդարադատության խորհրդի որոշումների ուսումնասիրության արդյունքում պատրաստվել է Դատավորների կարգապահական պատասխանատվության 2012-2017 թվականների պրակտիկայի վերաբերյալ զեկույցը: